# Minnesota Population Center

# Rural Building Listing Instructions
# Order N32

# Census: 2001
# Armenia

IPUMS-International
funded by the University of Minnesota and the National Science Foundation Grant SES-0433654
Minneapolis, Minnesota USA:  2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ՝ ՏՆԵՐԻ (ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Երևան - 2001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2001թ. մարդահամար

Հաստատված է
ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի
28 .02 2001թ N *32* որոշմամբ

# Ց Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ՝ ՏՆԵՐԻ (ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Երևան 2001

## I. Ընդհանուր դրույթներ

1. Մարդահամարի նախապատրաստման հիմնական աշխատանքներից մեկը հանդիսանում է քաղաքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների), գյուղական վայրերում գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների կազմումը:

**Ցուցակների կազմման որակից է կախված.**

- տարածքի ճիշտ բաժանումը մարդահամարային տեղամասերի,
- մարդահամարի հաշվառման ընթացքում բնակչության ընդգրկման ամբողջականության ապահովումը:

2. ՀՀ 2001թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների ժամանակացույցով սահմանված ժամկետներում՝ հատուկ ընտրված և հրահանգավորված ցուցակագրողների կողմից քաղաքներում և խոշոր գյուղերում (5 հազար և ավելի բնակչությամբ) կազմվում են տների (շինությունների) ցուցակներ, իսկ գյուղական համայնքներում կազմում են գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակները գյուղապետի աշխատակազմի քարտուղարները ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (այսուհետև՝ ԱՎԾ) մարզային վարչության և դրանց տարածքային բաժինների աջակցությամբ: Աշխատանքի կատարման ողջ պատասխանատվությունը դրվում է ՀՀ ԱՎԾ-ի մարզային վարչությունների և դրանց տարածքային բաժինների ղեկավարների վրա:

3. Տների (շինությունների) ցուցակներում բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները պետք է վերցվեն բնակարանային ֆոնդի սեփականատերերի կամ նրանց լիազոր մարմնի գրանցման բնակարանային քարտերից, տնային գրքերից, իսկ գյուղական վայրերում՝ գյուղական համայնքի գրքերից ( հաշվառման ձև 1):

## II. ՀՀ ԱՎԾ-ի մարզային վարչության տարածքային բաժինների պարտականությունները

1. ՀՀ ԱՎԾ-ի մարզային վարչության տարածքային բաժինները տների (շինությունների) ցուցակների և գյուղական բնակավայրերի ցուցակների կազմման աշխատանքների նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում պարտավոր են.

1.1. քաղաքների և խոշոր գյուղերի սխեմատիկ հատակագծերի վրա.

- համարակալել թաղամասերն ու զանգվածները՝ բնակավայրի սահմանում, հերթական համարակալմամբ,
- տարածքը բաժանել ցուցակագրման տեղամասերի՝ ցուցակագրողի ծանրաբեռնվածության նորմային համապատասխան: Մեկ ցուցակագրողի ծանրաբեռնվածության միջին նորման

սահմանված է 30 տուն/օր, իսկ աշխատանքները պետք է կատարվեն մեկ ամսվա ընթացքում 2001թ. ապրիլի 23-ից սկսած: Ծանրաբեռնվածության նորման կարող է տատանվել՝ կախված թաղամասերի (զանգվածների) կառուցապատման բնույթից և դիրքից: Ցուցակագրման տեղամասերը կարող են ընդգրկել ամբողջական թաղամասեր (զանգվածներ) կամ դրանց մի մասը:

Տարբեր թաղամասերի (զանգվածների) մասերից ցուցակագրման տեղամասեր կազմել չի թույլատրվում:

1.2. տների (շինությունների) ցուցակները կազմելու համար հավաքագրել ցուցակագրողներ և հրահանգավորել նրանց,

1.3. ցուցակագրողներին ծանոթացնել իրենց տեղամասերի սահմաններին՝ ճշտելով դրանք տեղամասում դուրս գալով,

1.4. ցուցակագրողներին ապահովել **վկայականներով**, տների (շինությունների) ցուցակների կազմման վերաբերյալ հրահանգներով, անհրաժեշտ քանակությամբ Ձև 1-քաղաքայինի (աղյուսակ 1, 2) բլանկներով,

1.5. ցուցակագրման տեղամասի սխեմատիկ հատակագծով, տվյալ տեղամասի բնակարանային ֆոնդի սեփականատերերի կամ սեփականատերերի կողմից լիազորված մարմինների (բնակշահագործման կազմակերպությունների, իրավաբանական անձի) հասցեների ցուցակով,

1.6. հրահանգավորել գյուղապետերի աշխատակազմի քարտուղարներին՝ համաձայն գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների՝ (ձև-2 գյուղական) լրացման կարգի մասին հրահանգի,

1.7. կազմակերպել յուրաքանչյուր ցուցակագրողի լրացրած տների (շինությունների) ցուցակների լրացման որակի (հատկապես աշխատանքի առաջին օրերին), ինչպես նաև դրանց ամբողջականության և ճշգրտության ստուգումներ:

2. Տների (շինությունների) ցուցակների և գյուղական բնակավայրերի ցուցակների ընդունման ժամանակ անհրաժեշտ է ստուգել.

քաղաքների և խոշոր գյուղերի տների ցուցակների կազմման ճշգրտությունը՝ դրանցում բոլոր թաղամասերի, փողոցների, նրբանցքների, հրապարակների և այլնի, տների ու շինությունների ընդգրկման ամբողջականությունը՝ համեմատելով դրանք բնակավայրի և (կամ) տեղամասի սխեմատիկ հատակագծի հետ, ինչպես նաև յուրաքանչյուր թաղամասի (զանգվածի) և ամբողջությամբ տեղամասի հանրագումարների ճշգրտությունը,

գյուղական բնակավայրերի ցուցակներում բոլոր գյուղական բնակավայրերի ընդգրկման ամբողջականությունը՝ ներառյալ գյուղական համայնքի տարածքում գտնվող ծառայողական նշանակություն ունեցող և ժամանակավոր կացատեղ հանդիսացող հիմնարկները, ինչպես նաև

յուրաքանչյուր բնակավայրի վերաբերյալ գրանցումների և դրանց համարակալման ճշգրտությունը:

3. Ցուցակներն ընդունելուց հետո հաշվարկվում են հանրագումարները՝ ըստ քաղաքների և գյուղական վայրերի, այնուհետև ամբողջությամբ ըստ տարածքի կտրվածքով: Տների (շինությունների) ցուցակներով ստացված քաղաքային բնակչության և ձև 2-գյուղականով ստացված գյուղական բնակչության թվաքանակը պետք է համեմատել տվյալ տարածքի բնակչության հաշվարկային թվաքանակի հետ: Էական տարբերությունների դեպքում անհրաժեշտ է պարզել դրանց պատճառը, և եթե դրանք առաջացել են ցուցակների ոչ ճիշտ կազմման հետևանքով, ապա պետք է կատարել այդ ցուցակների մանրամասն ստուգում և ուղղում:

4. Ցուցակագրման տեղամասերում շրջագայության ժամանակ ցուցակագրողների կողմից սխեմատիկ հատակագծերում կատարած փոփոխությունները պետք է անցկացնել սխեմատիկ հատակագծերի մյուս բոլոր օրինակների վրա:

5. ՀՀ ԱվԾ-ի կողմից սահմանված ժամկետում տների (շինությունների) ցուցակների և Ձև 2-գյուղականի արդյունքները ներկայացվում են ՀՀ ԱվԾ-ի մարզային վարչություն՝ հավելված 1,2-ում տրված Ձև-3 ամփոփ և Ձև-4 ամփոփ ձևերով:

6. **Ձև 3-ամփոփ** «Քաղաքներում տների (շինությունների) ցուցակների տվյալների ամփոփագիր» կազմվում է բոլոր քաղաքների համար ցուցակագրման տեղամասերի կտրվածքով ըստ ձև 1-քաղաքային - աղյուսակ 1-ի տվյալների: 1-ին սյունակում քաղաքների գրանցումը կատարվում է ըստ այբբենական կարգի:

7. **Ձև 4-ամփոփ** «Գյուղական բնակավայրերի ցուցակների տվյալների ամփոփագիրը» կազմվում է ձև 2-գյուղականի հանրագումարային տվյալների հիման վրա: 1-ին սյունակում գյուղական համայնքները գրանցվում են այբբենական կարգով: 2-5-րդ սյունակներում փոխանցվում են հիմնական բնակավայրերի հանրագումարները, ներառյալ դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի վերաբերյալ տվյալները:

### III. ՀՀ ԱվԾ-ի մարզային վարչությունների պարտականությունները

1. Տների (շինությունների) ցուցակների՝ Ձև 1-քաղաքային և Ձև 2-գյուղականի կազմման աշխատանքների նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում ***ՀՀ ԱվԾ-ի մարզային վարչությունը պարտավոր է իր տարածքային բաժինների ղեկավարներին***՝

- ապահովել ցուցակագրողների վկայականներով, ցուցակների ձևերի բավարար քանակությամբ և դրանց լրացման հրահանգներով,
- անցկացնել կազմված տների (շինությունների), գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների լրացման ընտրանքային ստուգումներ:

2. ՀՀ վիճակագրության տարածքային բաժինների պետերից նյութերն ընդունելիս անհրաժեշտ է կազմակերպել՝

- կազմած ցուցակների ճշգրտության ստուգում և դրանցում բոլոր թաղամասերի (զանգվածների), տների (շինությունների), գյուղական բնակավայրերի (ներառյալ դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերը), սոցիալական նշանակության և ժամանակավոր կացատեղ հանդիսացող հիմնարկների ընդգրկման ամբողջականությունը,
- ցուցակագրման տեղամասերի հատակագծերի և լրացված ցուցակների համապատասխանության ընտրանքային ստուգումներ,
- հանրագումարների ստուգում ըստ տարածքների ամփոփ տվյալների՝ ձև 3-ամփոփ, ձև 4-ամփոփ (տես հավելված 1,2 ):

3. ՀՀ ԱՎԾ-ի կողմից սահմանված ժամկետում տների (շինությունների) ցուցակների և ձև 2-գյուղականի վերջնական արդյունքները ներկայացվում են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն՝ ըստ հավելված 3,4-ում բերված ձևերի:

4. Ձև 5-ամփոփ «Քաղաքներում տների (շինությունների) ցուցակների տվյալների ամփոփագիր» կազմվում է բոլոր քաղաքների համար ըստ ձև 3-ամփոփի: 1-ին սյունակում քաղաքների գրանցումը կատարվում է տարածքի կտրվածքով ըստ այբբենական կարգի :

5. Ձև 6-ամփոփ «Գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների տվյալների ամփոփագիրը» կազմվում է ըստ ձև 4-ամփոփի: 1-ին սյունակում գյուղական համայնքները գրանցվում են տարածքների կտրվածքով ըստ այբբենական կարգի:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ 2001թ. մարդահամար

*Հավելված 1*
Ձև 3-ամփոփ

Հաստատված է
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի
28. 02. 2001թ. *N 32* որոշմամբ

*Կազմվում է ՀՀ ԱվԾ-ի մարզային վարչության*
*տարածքային բաժինների կողմից*

# Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր
**քաղաքներում տների (շինությունների) ցուցակների տվյալների**

______________________________ *մարզ*

______________________________ *տարածք*

| Քաղաքի կամ քաղաքային համայնքի անվանումը | Կազմված ցուցակների քանակը | Ընդամենը հաշվառվել են | | | | Ժամանակավոր կացարան հանդիսացող հիմնարկների | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տներ | բնակելի և ոչ բնակելի շինություններ | դրանցում՝ | | քանակը | դրանցում առկա տեղերի քանակը |
| | | | | բնակարաններ | բնակչություն | | |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| **Ընդամենը** | | | | | | | |

«   » ____________ 2001թ.

Տարածքային բաժնի պետ՝ ____________________
/ստորագրություն/

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ 2001թ մարդահամար

*Հավելված 2*

Ձև 4-ամփոփ

Հաստատված է
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի
*28. 02.2001թ. N 32 որոշմամբ*

*Կազմվում է ՀՀ ԱՎԾ-ի մարզային վարչության տարածքային բաժինների կողմից*

# ԱՄՓՈՓԱԳԻՐ

**գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակի տվյալների**

______________________ *տարածք*

______________________ *մարզ*

| Գյուղական համայնքի անվանումը | Բնակավայրերի քանակը | դրանցում հաշվառվել են | | | | ժամանակավոր կացարան հանդիսացող հիմնարկների | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | այլ բնակատեղեր | բնակելի շինություններ | տնային տնտեսություններ | բնակչություն | քանակը | դրանցում առկա տեղերի քանակը |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| ***Ընդամենը*** | | | | | | | |

« »__________________ *2001թ.*

**Տարածքային բաժնի պետ՝** ____________________
*/ստորագրություն/*

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ 2001թ. մարդահամար

*Հավելված 3*
Ձև 5-ամփոփ

Հաստատված է
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի
28. 02. 2001թ. *N 32* որոշմամբ

*Կազմվում է ՀՀ ԱՎԾ-ի մարզային վարչությունների կողմից*

# ԱՄՓՈՓԱԳԻՐ

**քաղաքներում տների (շինությունների) ցուցակների տվյալների**

______________________ *մարզ*

| Քաղաքի կամ քաղաքային համայնքի անվանումը | Կազմված ցուցակների քանակը | Ընդամենը հաշվառվել են | | | | Ժամանակավոր կացարան հանդիսացող հիմնարկների | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տներ | բնակելի և ոչ բնակելի շինություններ | դրանցում | | քանակը | դրանցում առկա տների քանակը |
| | | | | բնակարաններ | բնակչություն | | |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| ***Ընդամենը*** | | | | | | | |

« » ______________ 2001թ.

**Մարզային վարչության պետ** ______________________
*/ստորագրություն/*

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ 2001թ. մարդահամար

*Հավելված 4*
Ձև 6-ամփոփ

Հաստատված է
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի
28.02.2001թ. *N 32* որոշմամբ

*Կազմվում է ՀՀ ԱՎԾ-ի մարզային*
*վարչությունների կողմից*

# ԱՄՓՈՓԱԳԻՐ

գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող
այլ բնակատեղերի ցուցակների տվյալների
______________________ մարզ

| Գյուղական համայնքի անվանումը | Բնակավայրերի քանակը | Դրանցում հաշվառվել են | | | | Ժամանակավոր կացատեղ հանդիսացող շինությունների | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | այլ բնակատեղեր | բնակելի շինություններ | տնային տնտեսություններ | բնակչություն | քանակը | այդ տեղերի քանակը |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| ***Ընդամենը*** | | | | | | | |

« » ______________ 2001թ.

**Մարզային վարչության պետ** ______________
*/ստորագրություն/*

Նշումների համար ..........................................................................

Նշումների համար ........................................................................................

Նշումների համար ................................................................................